

Հ. Մ. ՀԱԽԻՆՅԱՆ, Ռ. Ս. ՔԱՐԻՄՅԱՆ, Լ. Գ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՇԱՔԱՐԱՍՆԿԵՐԻ ԿՈՒՆՏՈՒՐԱԿԱՆ ՄԶՎԱԾՔՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ
ՆՐԱՆՑ ԽՄՈՐՄԱՆ ԻՆՏԵՆՍԻՎՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Հայտնի է, որ շաքարասնկային մզվածքը մի կոնցենտրատ է, որը կարող է որպես բիոկատալիզատոր ծառայել սպիրտային խմորման ինտենսիվությունը բարձրացնելու համար:

Այդ կոնցենտրատը, որին վաղուց ի վեր անվանում են «բիոս», իրենից ներկայացնում է գլխավորապես B խմբին պատկանող վիտամինների կոմպլեքս (Ջոն Ուայտ—1957): Փորձերը ցույց են տվել, որ վիտամիններն առանձին վերցրած հանդիսանում են որոշ շաքարասնկերի աճման խթանիչներ:

Ե. Ն. Օդինցովան (1939, 1941, 1952), ուսումնասիրելով B խմբի մի քանի վիտամինների ազդեցությունը շաքարասնկերի կենսագործունեության վրա, ցույց է տվել, որ խմորման պրոցեսի և վիտամինների սինթեզման նրանց հատկության միջև գոյություն ունի որոշ օրինաչափություն: Նա հանգել է այն եզրակացության, որ ուժեղ խմորիչներն իրենց ինտենսիվ խմորման համար հատկապես բիոտինի կարիք են զգում: B խմբի վիտամիններից պանտոտենաթթվի դերը նույնպես մեծ է միկրոօրգանիզմների շնչառությունը խթանելու գործում: Միկրոօրգանիզմների կենսագործունեության և վիտամինների սերտ կապի վերաբերյալ զգալի աշխատանքներ են կատարել նաև Մ. Ն. Մեյսելը (1950), Ե. Մ. Պոպովան (1954), որոնք ուսումնասիրել են շաքարասնկային ավտոլիզատի դերը նրանց կենսագործունեության պրոցեսում: Նրանք ցույց են տվել, որ երբ ավտոլիզատ է ավելացվում խմորվող միջավայրում, այնտեղ ուժեղանում են ընթացող բիոքիմիական պրոցեսները: Ա. Պ. Սմիրնովան (1957) նշել է, որ գինու մեջ եղած շաքարասնկերն ավտոլիզատի հետ մեկտեղ գինին հարստացնում են ազոտային միացություններով և ֆերմենտներով, որոնք կարևոր են գինու ձևավորման, հասունացման ու հնացման պրոցեսներում:

Մենք անհրաժեշտ համարեցինք ուսումնասիրել վիտամիններով հարուստ կուլտուրալ մզվածքների ազդեցությունը տեղական մի քանի շաքարասնկերի խմորելու ունակության վրա, նպատակ ունենալով ընտրել այնպիսի շաքարասնկեր, որոնց կուլտուրալ

մզվածքները գրական ազդեցություն կթողենն սվյալ քաղցուի խմորման ինտենսիվության բարձրացման վրա:

Ե. Ն. Օդինցովայի առաջարկած խմորման էներգիայի որոշման միկրոմեթոդով ուսումնասիրվել է շաքարասնկերի կողմից անջատված CO_2 -ի բանակը վիտամիններով հարուստ շաքարասնկային մզվածքների առկայությամբ:

Ե. Ն. Օդինցովայի միկրոկուրաներում 4% շաքար պարունակող 4 մլ անդամիչավայրում փորձարկվել է շաքարասնկերի տարբեր շտամների խմորման էներգիան թիամինի, պանտոտենաթթվի, պիրիդոքսինի ու բիոտինի և նրանցով հարուստ շաքարասնկային մզվածքների ազդեցությամբ:

Նախքան շաքարասնկային մզվածքներ ստանալը, շաքարասնկերն աճեցվել են Հանգնի փոփոխված 6 անդամիչավայրերում. հետևյալ կազմով (մեկ լիտր թորած ջրում՝ գրամներով).

	1-ին	2-րդ	3-րդ	4-րդ	5-րդ	6-րդ
Քլյուկոզա	50	25	10	50	50	50
Պեպտոն	10	10	10	20	15	5
KH_2PO_4	3	3	3	3	3	3
MgSO_4	5	5	5	5	5	5

ինչպես նաև գարու ածիկի և խաղողի քաղցուների ազարային անդամիչավայրերում 5 օրից հետո բիոզանգվածը ազարային թիթղիկից հավաքվել է, 40°C ջերմության պայմաններում շորացվել և պատրաստվել է 0,01 Վ/մլ-անոց լուծույթ, որը հիդրոլիզացվել է ավտոկլավում 1 մինուտրային ճնշման տակ 30 րոպե տևողությամբ: Լուծույթից 0,5 մլ լցվել է Օդինցովայի միկրոկուրաների մեջ, ավելացվել է նաև 1 մլ թորած ջուր և 0,5 մլ 32 %-անոց շաքարային լուծույթ, շաքարասնկերի 8 %-անոց սուսպենզիայից 2 մլ, որը պատրաստվել է 1 մաս Na_2HPO_4 -ի և 16 մաս NaH_2PO_4 -ի մոլյարանոց բուֆերային լուծույթներով: Կուրաները կշռվել են սկզբում և 25°C ջերմության պայմաններում 2 ժամ պահելուց հետո: Կշիռների տարբերությունը ցույց է տվել անջատված CO_2 -ի բանակը:

Որպես թիամինով հարուստ շաքարասնկեր օգտագործվել են *Saccharomyces vini* 33, 45, *Sacch. oviformis* 715 և *Sacch. cerevisiae* 16 շտամները: Վերջիններիս մզվածքների ազդեցությունը փորձարկվել է *Sacch. vini* 487, Արմենիա 490 և 500 շաքարասնկերի խմորելու էներգիայի վրա:

Բացի վիտամիններով հարուստ մզվածքներից, փորձարկվել է նաև մաքուր բյուրեղային վիճակում գտնվող վիտամինը: Քե' կուլտուրալ մզվածքները և թե' վիտամինները վերցվել են 0,016 Կ/մլ: Ինչպես ցույց են տալիս աղյուսակ 1-ում բերված տվյալները, ստուգիչի հետ համեմատած (որտեղ կուլտուրալ մզվածքի կամ վիտամինի փոխարեն վերցվել է թորած ջուր), վիտամինները կամ կուլտուրալ մզվածքները նպաստել են շաքարասնկային շտամների կողմից անջատված CO₂-ի քանակի ինտենսիվ բարձրացմանը: Այսպես, օրինակ Sacch. vini 487 շաքարասնկի խմորելու ինտենսիվությունն ամենից շատ բարձրացել է Sacch. vini 45 կուլտուրայի մզվածքի առկայությամբ: Եթե առանց մզվածքի և առանց վիտամինի 4% շաքար պարունակող 4 մլ քաղցուի խմորումից 2 ժամում Sacch. vini 487 շաքարասունկն առաջացրել է 0,030 գ CO₂, ապա գարու ածիկի քաղցուում աճեցված Sacch. vini 45 կուլտուրայի մզվածքի առկայությամբ առաջացել է 0,044 գ, իսկ այդ նույն շաքարասնկային կուլտուրան Հանդենի 5-րդ սննդամիջավայրի վրա աճեցված Sacch. oviformis 715 շաքարասնկի մզվածքի հետ միասին առաջացրել է 0,068 գ CO₂, որը ստուգիչից 0,028 գ-ով ավելի է. նույն պատկերն է ստացվել նաև, երբ նշված կուլտուրաների մզվածքները փորձարկվել են Sacch. vini Արմենիա 490 շաքարասնկի հետ մեկտեղ: Վերջինիս խմորելու ինտենսիվությունը ամենից շատ բարձրացել է այն դեպքում, երբ օգտագործվել է գարու ածիկի քաղցու ագարի վրա ցանված Sacch. oviformis 715 շաքարասնկի մզվածքը, որի ներկայությամբ, ստուգիչի հետ համեմատած, առաջացրել է 0,100 գ CO₂: Ինչպես երևում է այդ տվյալներից, CO₂-ը 2 անգամ ավելի է ստացվել: Փորձարկված կուլտուրալ մզվածքները, խմորելու ինտենսիվության բարձրացման համար, օգտագործելու դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել ոչ միայն այն միջավայրը, որի վրա պահվում է տվյալ կուլտուրան, այլև շաքարասնկի տեսակը: Այսպես, օրինակ՝ մեր կողմից վերցված թիամինով (վիտամին B₁) հարուստ կուլտուրալ մզվածքներից ամենից լավ արդյունք են տվել Sacch. oviformis 715 և Sacch. vini 45 շաքարասնկային շտամները, որոնք փորձարկված բոլոր խմորիչների վրա դրական ազդեցություն են գործել: Sacch. cerevisiae 16 շաքարասնկային շտամի կուլտուրալ մզվածքը, ստուգիչի հետ համեմատած, առանձնապես մեծ արդյունք չի տվել:



մզվածքները զբաղեցնում են ազդեցություն կթողնեն սովյալ քաղցուի խմորման ինտենսիվության բարձրացման վրա:

Ե. Ն. Օդինցովայի առաջարկած խմորման էներգիայի որոշման միկրոմեթոդով ուսումնասիրվել է շաքարասնկերի կողմից անջատված CO₂-ի քանակը վիտամիններով հարուստ շաքարասնկային մզվածքների առկայությամբ:

Ե. Ն. Օդինցովայի միկրոկոլոլրաներում 4% շաքար պարունակող 4 մլ սննդամիջավայրում փորձարկվել է շաքարասնկերի տարբեր շտամների խմորման էներգիան թիամինի, պանտոտենաթթվի, պիրիդոքսինի ու բիոտինի և նրանցով հարուստ շաքարասնկային մզվածքների ազդեցությամբ:

Նախքան շաքարասնկային մզվածքներ ստանալը, շաքարասնկերն անցցվել են Հանզենի փոփոխված 6 սննդամիջավայրերում, հետևյալ կազմով (մեկ լիտր թորած ջրում՝ գրամներով).

	1-ին	2-րդ	3-րդ	4-րդ	5-րդ	6-րդ
Քլյուկոզա	50	25	10	50	50	50
Պեպտոն	10	10	10	20	15	5
KH ₂ PO ₄	3	3	3	3	3	3
MgSO ₄	5	5	5	5	5	5

ինչպես նաև գարու ածիկի և խազոզի քաղցուների ազարային սննդամիջավայրերում 5 օրից հետո բիոգանգվածը ազարային թիթեղիկից հանարվել է, 40°C ջերմության պայմաններում շորացվել և պատրաստվել է 0,01 Վ/մլ-անոց լուծույթ, որը հիդրոլիզացվել է ավտոկլավում 1 մթնոլորտային ճնշման տակ 30 րոպե տևողությամբ: Լուծույթից 0,5 մլ լցվել է Օդինցովայի միկրոկոլոլրաների մեջ, ավելացվել է նաև 1 մլ թորած ջուր և 0,5 մլ 32 %-անոց շաքարային լուծույթ, շաքարասնկերի 8 %-անոց սուսպենզիայից 2 մլ, որը պատրաստվել է 1 մաս Na₂HPO₄-ի և 16 մաս NaH₂PO₄-ի մոլյարանոց բուֆերային լուծույթներով: Կոլրաները կշռվել են սկզբում և 25°C ջերմության պայմաններում 2 ժամ պահելուց հետո: Կշիռների տարբերությունը ցույց է տվել անջատված CO₂-ի քանակը:

Որպես թիամինով հարուստ շաքարասնկեր օգտագործվել են Saccharomyces vini 33, 45, Sacch. oviformis 715 և Sacch. cerevisiae 16 շտամները: Վերջիններիս մզվածքների ազդեցությունը փորձարկվել է Sacch. vini 487, Արմենիա 490 և 500 շաքարասնկերի խմորելու էներգիայի վրա:

Բացի վիտամիններով հարուստ մզվածքներից, փորձարկվել է նաև մաքուր բյուրեղային վիճակում գտնվող վիտամինը: Թե՛ կուլտուրալ մզվածքները և թե՛ վիտամինները վերցվել են 0,016 Դ/մլ: Ինչպես ցույց են տալիս աղյուսակ 1-ում բերված տվյալները, ստուգիչի հետ համեմատած (որտեղ կուլտուրալ մզվածքի կամ վիտամինի փոխարեն վերցվել է թորած ջուր), վիտամինները կամ կուլտուրալ մզվածքները նպաստել են շաքարասնկային շտամների կողմից անջատված CO₂-ի քանակի ինտենսիվ բարձրացմանը: Այսպես, օրինակ Sacch. vini 487 շաքարասնկի խմորելու ինտենսիվությունն ամենից շատ բարձրացել է Sacch. vini 45 կուլտուրայի մզվածքի առկայությամբ: Եթե առանց մզվածքի և առանց վիտամինի 4% շաքար պարունակող 4 մլ քաղցուի խմորումից 2 ժամում Sacch. vini 487 շաքարասունկն առաջացրել է 0,030 գ CO₂, ապա դարու ածիկի քաղցուում աճեցված Sacch. vini 45 կուլտուրայի մզվածքի առկայությամբ առաջացել է 0,044 գ, իսկ այդ նույն շաքարասնկային կուլտուրան Հանզենի 5-րդ սննդամիջավայրի վրա աճեցված Sacch. oviformis 715 շաքարասնկի մզվածքի հետ միասին առաջացրել է 0,068 գ CO₂, որը ստուգիչից 0,028 գ-ով ավելի է. նույն պատկերն է ստացվել նաև, երբ նշված կուլտուրաների մզվածքները փորձարկվել են Sacch. vini Արմենիա 490 շաքարասնկի հետ մեկտեղ: Վերջինիս խմորելու ինտենսիվությունը ամենից շատ բարձրացել է այն դեպքում, երբ օգտագործվել է դարու ածիկի քաղցու ագարի վրա ցանված Sacch. oviformis 715 շաքարասնկի մզվածքը, որի ներկայությամբ, ստուգիչի հետ համեմատած, առաջացրել է 0,100 գ CO₂: Ինչպես երևում է այդ տվյալներից, CO₂-ը 2 անգամ ավելի է ստացվել: Փորձարկված կուլտուրալ մզվածքները, խմորելու ինտենսիվության բարձրացման համար, օգտագործելու դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել ոչ միայն այն միջավայրը, որի վրա պահվում է տվյալ կուլտուրան, այլև շաքարասնկի տեսակը: Այսպես, օրինակ՝ մեր կողմից վերցված թխամիսով (վիտամին B₁) հարուստ կուլտուրալ մզվածքներից ամենից լավ արդյունք են տվել Sacch. oviformis 715 և Sacch. vini 45 շաքարասնկային շտամները, որոնք փորձարկված բոլոր խմորիչների վրա դրական ազդեցություն են գործել: Sacch. cerevisiae 16 շաքարասնկային շտամի կուլտուրալ մզվածքը, ստուգիչի հետ համեմատած, առանձնապես մեծ արդյունք չի տվել:

ՈԱ-11-940.



Կնշանակի՝ խմորման ինտենսիվության բարձրացման համար հարկավոր է հաշվի առնել նաև խմորող շաքարասնկի, ինչպես նաև խթանիչի տեսակը: Քիամիներ մաքուր վիճակում նույնպես, ստուգիչի հետ համեմատած, բոլոր տարրերակներում բարձրացրել է շաքարասնկերի խմորելու էներգիան, սակայն ոչ ավելի, քան շաքարասնկային մզվածքը:

Շաքարասնկերի խմորելու ինտենսիվության վրա պիրիդոքսինի և նրանով հարուստ շաքարասնկային մզվածքների ազդեցությունն ուսումնասիրելու նպատակով պիրիդոքսինով հարուստ *Saccharomyces cerevisiae* 16, 42, Sacch. vini 32 շաքարասնկերի մզվածքները փորձարկվել են Sacch. vini 43, 487 և 500 շաքարասնկերի հետ միասին: Ինչպես ցույց են տալիս աղյուսակ 2-ի տվյալները, ամենից լավ արդյունք է ստացվել Հանզենի 6-րդ սննդամիջավայրի վրա պահված (որտեղ պեպտոնը կիսով չափ պակաս է) Sacch. cerevisiae 16 և Sacch. vini 32 շաքարասնկային մզվածքների առկայությամբ, որոնք նպաստել են Sacch. vini 487 շաքարասնկի խմորելու էներգիայի ինտենսիվության բարձրացմանը: Այդ երևում է, ստուգիչի հետ համեմատած, անջատված CO₂-ի քանակից:

Հանզեն 5-րդ սննդամիջավայրի վրա աճեցված Sacch. cerevisiae 42 շաքարասնկի մզվածքը բարերար ազդեցություն է ունեցել Sacch. vini 500 շաքարասնկի խմորելու էներգիայի վրա: Այս դեպքում ստուգիչի 0,033 գ-ի փոխարեն առաջացել է 0,046 գ CO₂: Այստեղ նույնպես կուլտուրալ մզվածքներն ավելի լավ արդյունք են տվել խմորելու էներգիայի բարձրացման պրոցեսում, քան մաքուր պիրիդոքսինը: Ստուգիչի հետ համեմատած, պիրիդոքսինը խմորելու էներգիան բարձրացրել է միայն որոշ տարրերակներում, այն էլ շատ շնչին քանակով, իսկ շաքարասնկերի կուլտուրալ մզվածքները որոշ դեպքերում կրկնակի և ավելի են բարձրացրել խմորելու էներգիան: Այսպես, օրինակ՝ Sacch. vini 500 շաքարասնկի խմորելու էներգիայի վրա բավական նպաստավոր ազդեցություն է ունեցել Հանզեն 2-րդ սննդամիջավայրի վրա (որտեղ գլյուկոզի քանակը կրկնակի չափով պակաս է) պահված Sacch. cerevisiae 16 շաքարասնկային մզվածքը (աղ. 2):

Փորձարկված վիտամիններից շաքարասնկերի աճեցողության համար ամենաուժեղ խթանիչը հանդիսանում է բիոտինը: Որպես բիոտինով հարուստ շաքարասնկեր օգտագործվել են *Candida krusei* 507 և Sacch. vini 32 շաքարասնկերի մզվածքները, իսկ

Աղյուսակ 1
 թխամկնով հարուստ շաքարասնկային մզվածքների ազդեցությունը Saccharomyces vini տարրեր շտամաների խմորելու էներգիայի վրա

Վերջնական Saccharomyces vini շտամաները	տարրեր անդամիջավայրերում անկցրած շաքարասնկերի մզվածքների ազդեցությունը CO ₂ -ի քանակի վրա (CO ₂ , գ)	Վարձեր անդամիջավայրի տարրերակները					Խառնիկ	Խառնիկի քաղցրություն	Խառնիկի քաղցրություն	CO ₂ , գ	Խառնիկի քաղցրություն
		Վարձեր անդամիջավայրի տարրերակները									
		1	2	3	4	5					
487 Արմենիա 490 500	sacch vini 45	0,037 0,037 0,041	0,033 0,035 0,041	0,033 0,034 0,040	0,031 0,035 0,041	0,034 0,036 0,042	0,036 0,034 0,042	0,044 0,033 0,032	0,031 0,034 0,048	0,031 0,034 0,038	0,030 0,032 0,038
487 Արմենիա 490 500	sacch cerevisiae 16	0,018 0,029 0,014	0,020 0,025 0,010	0,016 0,029 0,011	0,015 0,026 0,015	0,013 0,027 0,015	0,012 0,033 0,015	0,013 0,027 0,014	— — —	0,021 0,026 0,012	0,019 0,024 0,017
487 Արմենիա 490 500	sacch, vini 33	0,018 0,027 0,012	0,016 0,027 0,012	0,020 0,028 0,018	0,012 0,027 0,013	0,022 0,031 0,020	0,014 0,029 0,016	0,010 0,030 0,017	0,022 0,030 0,014	0,011 0,035 0,014	0,011 0,023 0,011
487 Արմենիա 490 500	sacch oviformis 715	0,054 0,048 0,019	0,052 0,048 0,017	0,053 0,058 0,011	0,055 0,076 0,017	0,068 0,053 0,016	0,060 0,050 0,013	0,059 0,100 0,012	0,058 0,054 0,018	0,047 0,045 0,019	0,040 0,045 0,013

Պիրիդոքսինով հարուստ շաքարանագեղին միզվածքների ազդեցությանը *Saccharomyces vini* շտամների խմորելու և ներթափանցելու արագությունը

Տարբերակները համարվում են միջին արագության շաքարանագեղին միզվածքների ազդեցությանը

Տարբերակները համարվում են միջին արագության շաքարանագեղին միզվածքների ազդեցությանը

Տարբերակները համարվում են միջին արագության շաքարանագեղին միզվածքների ազդեցությանը

Ֆորմերով համարները	Շտամները	Ներթափանցման արագությունները						Խմորելու արագությունը	Ներթափանցելու արագությունը
		Շաքարանագեղին միզվածքների ազդեցությանը							
		1	2	3	4	5	6		
43	<i>Saccharomyces vini</i> 42	0,010	0,017	0,015	0,015	0,016	0,019	—	0,014
487		0,022	0,024	0,021	0,021	0,023	0,017	—	0,022
500		0,034	0,039	0,040	0,042	0,046	0,043	—	0,036
43	<i>Saccharomyces cerevisiae</i> 16	0,035	0,037	0,043	0,034	0,037	0,042	—	0,032
487		0,036	0,036	0,037	0,036	0,039	0,040	—	0,035
500		0,009	0,012	0,008	0,010	0,011	0,011	—	0,007
43	<i>Saccharomyces vini</i> 32	0,029	0,025	0,029	0,035	0,030	0,032	0,028	0,029
487		0,017	0,017	0,012	0,015	0,019	0,024	0,017	0,019
500		0,007	0,008	0,008	0,012	0,011	0,011	0,011	0,010

2

1

որպես խմորիչներ օգտագործվել են Sacch. chodati 13, Sacch. vini Արմենիա 490 և 500 շաքարասնկերը:

Ինչպես երևում է աղյուսակ 3-ի տվյալներից, Հանզեն 1-ին Ազյուսակ 3

Բիոտինով հարուստ շաքարասնկային մզվածքների ազդեցությունը Saccharomyces chodati 13 և Sacch vini շտամների խմորելու էներգիայի վրա

Մեծագրությամբ մեջ առնված փոփոխությունների զտամանակը	Տարբեր սննդամիջավայրերում աճեցրած շաքարասնկերի մզվածքների ազդեցությունը CO ₂ -ի քանակի վրա (CO ₂ %)									CO ₂ , %	
	Հանզենի սննդամիջավայրի տարբերակները						Գարու ածխի քանակը	Խաղողի քանակը	ստուգիչ շտամ	Բիոտին	
	1	2	3	4	5	6					
13	32	0,035	0,029	0,038	0,030	0,032	0,031	0,034	0,034	0,003	0,031
33	32	0,025	0,028	0,030	0,030	0,029	0,030	0,026	0,036	0,028	—
487	32	0,011	0,015	0,015	0,014	0,017	0,013	0,014	0,019	0,011	0,009
490	32	0,008	0,010	0,008	0,009	0,010	0,008	0,010	0,011	0,010	0,009
500	32	0,034	0,025	0,023	0,002	0,027	0,025	0,026	0,029	0,021	0,026
13	507	0,008	0,018	0,012	0,016	0,013	0,017	0,017	—	0,009	0,010
33	507	0,010	0,020	0,013	0,023	0,014	0,017	0,017	—	0,010	0,011
487	507	0,012	0,016	0,015	0,015	0,014	0,013	0,024	—	0,015	0,009
490	507	0,018	0,017	0,023	0,018	0,018	0,016	0,017	—	0,013	0,019
500	507	0,015	0,017	0,017	0,017	0,017	0,025	0,022	—	0,016	0,014

սննդամիջավայրի վրա աճեցված բիոտինով հարուստ Sacch. vini 32 շաքարասնկի մզվածքը Sacch. vini 500 շաքարասնկի խմորելու ինտենսիվությունը, ստուգիչի հետ համեմատած, զգալիորեն բարձրացրել է: Եթե ստուգիչում Sacch. vini 500 շաքարասնկի անջատած CO₂-ի քանակը, առանց վիտամինի կամ կուլտուրալ մզվածքի, եղել է 0,021 գ, ապա նշված կուլտուրալ մզվածքն օգտագործելու դեպքում այն հասել է 0,034 գ-ի: Candida krusei 507 շաքարասնկի մզվածքը բարեբար ազդեցություն է թողել Sacch. chodati 13 շաքարասնկի խմորելու ինտենսիվության բարձրացման վրա:

Եթե ստուգիչում, առանց կուլտուրալ մզվածքի, CO₂-ի քանակը եղել է 0,009 գ, ապա Հանզենի 2-րդ սննդամիջավայրում աճեցված Candida krusei 507 շաքարասնկի մզվածքի առկայությամբ Sacch. chodati 13 շաքարասնկին առաջացրել է 0,018 գ և, ինչպես երևում է այդ աղյուսակի տվյալներից, բոլոր փորձարկված սննդամիջավայրերից վերցված Candida krusei 507 շտամի մզվածքը, ստուգիչի հետ համեմատած, բարձրացրել է խմորելու ին-

տենսիվությունը: Անհրաժեշտ է ընդգծել, որ խմորելու էներգիայի բարձրացմանն ամենից շատ նպաստում է *Candida krusei* 507 շաքարանկի կուլտուրալ մղվածքը:

Այդ շաքարատենկը հարուստ է բիոտինով, ինչպես նաև Յ խմբին պատկանող թիամին, պանտոտենաթթու, նիկոտինաթթու, պիրիդոքսին վիտամիններով (Փ. Գ. Սարուխանյան, Լ. Մ. Հախինյան, Ռ. Ս. Քարիմյան—1964):

Փորձերը ցույց են տվել, որ պանտոտենաթթուն և նրանով հարուստ կուլտուրալ մղվածքները, համեմատած թիամինի, պիրիդոքսինի և բիոտինի հետ, առանձնապես ազդեցություն չեն ունենում փորձարկվող շաքարանկերի խմորելու էներգիայի վրա:

Միայն *Sacch. oviformis* 779 շաքարանկային շտամի խմորելու ինտենսիվությունն է բարձրանում պանտոտենաթթվով հարուստ *Sacch. oviformis* 43 և *Sacch. cerevisiae* 345 շաքարանկերի կուլտուրալ մղվածքների ազդեցությամբ: Ինչպես ցույց են տալիս աղյուսակ 4-ի տվյալները, սուուզիչի հետ համեմատած (0,009—0,039 գ), բոլոր սննդամիջավայրերում անեցված *Sacch. oviformis* 43 և *Sacch. cerevisiae* 345 շաքարանկերի կուլտուրալ մղվածքները նպաստում են *Sacch. oviformis* 779 շաքարա-

Ա գյ ու ս ս կ 4

Պանտոտենաթթվով հարուստ շաքարանկային մղվածքների ազդեցությունը *Saccharomyces oviformis* 779 շտամի խմորելու էներգիայի վրա

Տարբեր սննդամիջավայրում անեցրած շաքարանկերի մղվածքների ազդեցությունը CO ₂ -ի բանակի վրա (CO ₂ , գ)							CO ₂ , Գ			
շտամների տեսակները	Հանգենի սննդամիջավայրի տարբերակները						փարս. ամիլիթրոպացու.	խաղողի փաղցու.	պանտոտենաթթու.	սուուզիչի ֆու. ք.
	1	2	3	4	5	6				
<i>Sacch. oviformis</i> 43	0,009	0,011	0,010	0,011	0,013	0,010	0,011	0,011	0,008	0,009
<i>Sacch. cerevisiae</i> 345	0,043	0,047	0,045	0,040	0,050	0,047	0,045	—	0,044	0,039

սրնկի առաջացրած CO₂-ի բանակի շտացմանը (0,009—0,050 գ): Որպես այդպիսիներ ամենից ավելի աչքի են ընկնում Հանգենի 5-րդ սննդամիջավայրում անեցված *Sacch. oviformis* 43 և *Sacch. cerevisiae* 345 շտամների մղվածքները, որոնց ազդեցությամբ *Sacch. oviformis* 779 շաքարանկի անջատած CO₂-ի բանակը,

ստուգելի հետ համեմատած, ամենից շատ է ավելացել (0,013 գ և 0,050 գ):

Մեր կողմից ուսումնասիրված շաքարասնկերը ինչպես պանտոտենաթթվի (B₃), այնպես էլ նիկոտինաթթվի (PP) նկատմամբ համարյա թե պահանջ չեն զգում: Այդ պատճառով էլ տվյալ վիտամինի կամ նրանով հարուստ շաքարասնկային կուլտուրայի ներկայությունն առանձնապես ոչ մի ազդեցություն չի ունեցել փորձարկված շաքարասնկերի խմորելու էներգիայի վրա: Միայն Sacch. oviformis 708 շաքարասնկի կուլտուրալ մզվածքն է, որ հարուստ լինելով նիկոտինաթթվով, որոշ չափով նպաստել է Sacch. oviformis 726 շաքարասնկային կուլտուրայի խմորման ինտենսիվության բարձրացմանը: Առանց նիկոտինաթթվի և դրանով հարուստ կուլտուրալ մզվածքի, այդ շաքարասունկին անջատել է 0,025 գ CO₂, նիկոտինաթթվի առկայությամբ՝ 0,028 գ, իսկ Հանզենի 1-ին սննդամիջավայրի վրա աճեցված Sacch. oviformis 708 շաքարասնկի մզվածքը անջատել է 0,028 գ, Հանզեն 2-րդի վրա՝ 0,035 գ, Հանզեն 3-րդի վրա՝ 0,029 գ, Հանզեն 4-րդի վրա՝ 0,029 գ, Հանզենի 5-րդ սննդամիջավայրի վրա՝ 0,028 գ., Հանզեն 6-րդի վրա՝ 0,031 գ: Ինչպես երևում է այս տվյալներից, ամենից շատ CO₂ է արտադրել Հանզեն 2-րդի դեպքում (շաքարը կիսով չափ պակաս), երբ անջատված CO₂-ի քանակը հասել է 0,035 գ-ի:

Այսպիսով, եթե ուսումնասիրված բոլոր վիտամինների և նրանց կուլտուրալ մզվածքների ներկայությամբ ստացված CO₂-ի ամենաբարձր քանակները, համեմատած ստուգելի հետ, արտահայտենք տոկոսներով (աղ. 5), ապա կստացվի, որ շաքարասնկերի խմորելու էներգիայի վրա ամենից լավ ազդել են Ն. 2-րդ և Ն. 4-րդ սննդամիջավայրերում աճեցված Candida krusei 507 շաքարասնկի մզվածքները:

Քիտոսինով հարուստ այդ մզվածքները գինու շաքարասնկերի խմորելու էներգիան բարձրացրել են 205,8—234%—ով:

Որպես լավ խթանիչներ հիշատակության արժանի են նաև Sacch. oviformis 715 և Sacch. vini 33 շաքարասնկային շտամները, որոնց (Ն. 5-րդ սննդամիջավայրի վրա աճեցված) կուլտուրալ մզվածքները Sacch. vini 487 շաքարասնկային շտամի անջատած CO₂-ի քանակը հասցրել են մինչև 169,1—204,7%, իսկ Sacch. oviformis 715 շտամի կուլտուրալ մզվածքը (գարու ածիկի քաղցու ազարի վրա աճեցված) Sacch. vini Արմինիա 490 շաքարասնկային շտամի անջատած CO₂-ի քանակը հասցրել է մին-

չև 216,5% -ի:

Կատարված աշխատանքներից կարելի է անել հետևյալ ձգ-բակացույթյունները:

1. Հանգենի սենդամիչավայրում պեպտոնի և շաքարի քանակի փոփոխությունը նպաստում է շաքարասնկերի վիտամին սինթեզելու հատկության բարձրացմանը:

2. Հանգենի 5 փոփոխված (շաքարի կամ Պեպտոնի) սենդամիչավայրերից ստացված շաքարասնկի կուլտուրալ մզվածքները բարձրացնում են շաքարասնկի խմորելու ինտենսիվությունը:

3. Շաքարասնկերի խմորելու էներգիայի բարձրացմանն առավել նպաստում են Sacch. vini-ին պատկանող, թիրամինով հարուստ շաքարասնկերի կուլտուրալ մզվածքները:

4. *Candida krusei* 507 շտամի կուլտուրալ մզվածքը շաքարասնկերի խմորելու էներգիայի բարձրացմանն ավելի է նպաստում, քան մյուս տեսակներին պատկանող շաքարասնկերի կուլտուրալ մզվածքները:

5. Շաքարասնկերի խմորելու էներգիայի բարձրացման ընթացքում շաքարասնկային մզվածքներն ավելի լավ արդյունք են տալիս, քան մաքուր վիտամինային լուծույթները (բացառությամբ բիոտինի):

Р. М. Ахинян, Р. С. Каримян, Л. Г. Петросян

Влияние культуральных вытяжек дрожжей на интенсивность брожения

Резюме

Известно, что культуральные вытяжки микроорганизмов богаты витаминами, которые могут стимулировать процесс брожения у дрожжей. Нами были изучены местные штаммы дрожжей из вида *Saccharomyces vini* 32,33 и 45, *Saccharomyces cerevisiae* 16,42 и *Saccharomyces oviformis* 715, *Candida krusei* 507, которые культивированы на шести видоизмененных питательных средах Ганзена, а также пивном и виноградном сусло-агаре. Влияние культуральных вытяжек этих дрожжей испытывалось на интенсивность брожения дрожжей *Saccharomyces vini* 43,487, 490, 500 и *Sacch. chodati* 13.

Из проведенных исследований можно сделать следующие выводы.

1. Изменение количества пептона и сахара в разных питательных средах Ганзена эффективно влияет на повышение витаминосинтезирующего свойства дрожжей.

2. Культуральные вытяжки, приготовленные на таких питательных средах, повышают интенсивность брожения изученных дрожжей.

3. Культуральные вытяжки вида дрожжей *Sacch. vini*, богатые тиаминном, повышают интенсивность брожения.

4. Культуральные вытяжки штамма 507, принадлежащие виду *Candida krusei*, богаты биотином и энергию брожения повышают больше, чем культуральные вытяжки других видов.

5. Энергию брожения культуральные вытяжки повышают больше, чем чистые витамины (кроме биотина).

R. M. Hakhinian, R. S. Karimian, L. G. Petrossian

The influence of cultural extracts on the intensity of yeast fermentation

Summary

A study of cultural extracts of yeasts of *Sacch. vini* strains 32, 33, 45, *Sacch. cerevisiae* strains 16, 42, *Sacch. oviformis* strain 715 and *Candida krusei* strain 507 species has been conducted to discover their action on the intensity of yeast fermentation of the following species: *Sacch. vini* strains 43, 487, 490, 500 and *Sacch. chodatii* strain 13.

The deductions to be made are as follows:

1) the modification of the peptone amount and sugar in various nutritive media of Hansen favours noticeably the growth of the vitamin-synthesizing properties of yeasts;

2) the cultural extracts made in various nutritive media enhance the fermentation intensity of the investigated yeasts,

3) the cultural extract of the yeasts *Sacch. vini*, rich in thiamine, promotes the fermentation intensity;

4) the cultural extracts of *Candida krusei* strain 507 is

rich in biotin and it promotes fermentation energy more than the cultural extracts of other species;

5) the cultural extracts enhance the fermentation energy more than the pure vitamins, except the biotin.

ՖՐԱՆՍԵՆՏՆԵՐ

- Мейсель М. Н. 1950. Витамины и микроорганизмы. «Успехи биологической химии», 1, 390.
- Одинцова Е. Н. 1939. Активаторы спиртного брожения. «Микробиология», 8, 3, 445.
- Одинцова Е. Н. 1952. Синтез витаминов дрожжевыми микроорганизмами. «Вопросы микробиологии в виноделии и виноградарстве». Труды конференции по микробиологии, 125.
- Одинцова Е. Н. 1959. Микробиологические методы определения витаминов. М.
- Попова Е. М. 1954. Значение дрожжевых автолизатов для повышения качества вина. «Виноделие и виноградарство СССР», 5, 15.
- Смирнова А. П. 1957. Активность ферментов винных дрожжей в связи с применением автолизатов при производстве шампанского. «Виноделие и виноградарство СССР», 1, 7.
- Саруханиян Ф. Г., Ахиян Р. М., Каримян Р. С. 1964. К отбору дрожжей, способных синтезировать витамины группы В. Известия АН АрмССР, XVII, 6, 23.
- Джон-Уайт. 1957. Технология дрожжей. Пищепромиздат, М.